'ի լեառն Զիթենեաց, և սկիզբն արարին քակել և աւերել զբովանդակ շինուածս, կործանեցին զսեղանն 'ի ներքոյ գմբեթին, եւ վաստակեալ զաւուրս երկուս հիմն 'ի վեր տապալեցին սենեկաց և այլոց իրաց։ և չթողին նշմարանք ինչ ասել թէ 'ի շինուածոց Հայոց է։ Լուսարար Կարապետն՝ որ միայն գտաւ անդ 'ի Հայոց, հազիւ կարաց զերծուցանել զսպասս եկեղեցւոյն և զայլ կարասիս, եւ դարձուցեալ զտեղին յաւեր և յապականութիւն՝ եկեալ անցանէին թմբկօք և պարուք իբրեւ յաղթանակաւ առաջի վանաց Ս. Յակոբայ 'ի նախատինս Հայ կղերաց։ այսպէս կործանեցին Լատինք և Յոյնք զբովանդակ շինուածս Հայոց, զոր բազում աշխատութեամբ կառուցին 'ի լեառն Զիթենեաց, ուր պատարագէին 'ի հինգշաբթի եւ 'ի կիւրակէ աւուրս 'ի մխիթարութիւն ժողովրդոց, եւ թողին զայն յառաջին աւերակ վիճակին ('ի 11 Սեպտեմբերի, 1839)։ Իսկ աւագ թարգման Սահակ վարդապետ, որ ինքն վերակացու շինութեան և պատասխանատու յամենայն դատաստանական քննութիւնս, չգտաւ 'ի վերջին ժողովի աստ։ զի գնացեալ էր բերել զգործիս և զքարինս հողմաղացի, և եղեւ 'ի մօտիլ նորա յԵրուսաղէմ՝ ետես 'ի հեռուստ զի ելանէր եւ դիզանայր փոշի քանդման իբրեւ մրրիկ ծխոյ։ սկսաւ լալ և կոծել զանձն իւր, զի ընդունայն եղեն ջանք և վաստակք իւր, այլ անցեալ էր ժամանակն և ամենայն ինչ կատարեալ։ Եւ յանցանել աւուրց՝ Դատաւորն և Քաղաքապետն ետուն շինել և կարկատել զդրունս եւ զայլ տեղիս ըստ առաջին դրից, եւ զծախսն առին յերից վանաց։ Յետ կործանելոյ զշինուածս Համբարձման տեղւոյն Գաբրիէլ Պատրիարք Երուսաղէմի եւ Խորհրդական հարք, գրեցին 'ի Ս. Էջմիածին առ Յովհաննէս Կաթուղիկոս Կարբեցի զամենայն հանգամանս գործոյն՝ մի առ մի պատմելով 'ի սկզբանէ մինչեւ ցվախճան, զի մի օտարազգիք բարուրանս եղեալ այլ և այլ բանիւք ամբաստանեսցեն զմիաբանութիւնս Հայոց, եւ այսպիսի եղանակաւ ծանուցեալ զճշմարտութիւն անցիցն խնդրեցին 'ի նմանէ թուղթ մխիթարական։

Եւ զի Յովհաննէս Կաթուղիկոս ամօք յառաջ գրեալ էր առ Խորհրդականս, հայրական սիրով յորդորելով և պա-